

ՐԱՅՅԻ ԵՎ ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆ

Լ. Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Րաֆֆու գործի համազգային նշանակությունը ակնհայտ իրողություն դարձավ դեռևս անցյալ դարի 70—80-ական թթ., նրա գրական-հասարակական գործունեության ամենահոուն շրջանում: Մեծ գրողի ստեղծագործական նոր խոսքին հաղորդակից է լինում նաև արևմտահայ գրական-հասարակական միտքը, և այս ասպարեզում դժվար է գերազնահատել արևմտահայ լեզվի ստական շարժման հիմնադիր, գրող, հրապարակախոս, քննադատ և հասարակական գործիչ Արփիար Արփիարյանի ծառայությունը:

Շարունակելով նախորդ առաջադեմ դեմոկրատ գործիչների՝ Մ. Նալբանդյանի, Մ. Պեշիկթաշլյանի, Հ. Սվաճյանի ավանդույթները, Արփիարյանը իր խոշոր ներդրումն է բերել հայ ժողովրդի երկու հատվածների մերձեցման ու փոխադարձ ճանաչման գործին: Նա առաջինն էր, որ ըստ արժանվույն գնահատելով Րաֆֆուն, արևմտահայ ընթերցողին ներկայացրեց նրա ստեղծագործության դերն ու նշանակությունը: Եվ դա պատահական չէր. բանն այն է, որ նա լիովին բաժանում էր Րաֆֆու հասարակական-քաղաքական հայացքները և միանգամայն ակնհայտ էր նրանց գաղափարական հոգեհարազատությունը:

Թուրքական դաժան գրաքննության պայմաններում Արփիարյանը նորաբաց «Արևելք» օրաթերթի էջերում նախաձեռնում և իրագործում է Րաֆֆու գործերի հրատարակությունը: Րաֆֆու առաջին գործը, որին ծանոթանում է արևմրտահայ ընթերցողը, «Խաչագողի հիշատակարանն» էր, որը սկսում է տպագրվել 1884 թ. «Արևելքի» 24—155 համարներում¹:

Ինչպես և սպասվում էր, «Խաչագողի հիշատակարանը» ջերմ ընդունելություն է գտնում ընթերցողների լայն շրջանում, սակայն արդեն հաջորդ՝ «Խամսայի մեկիթություններ» գործի հրատարակությունը «Արևելքի» էջերում կանգնում է գրաքննչական լուրջ արգելքների առջև: Չնայած դրան, Արփիարյանը գտնում է ելք և տպագրում այն իբրև «Համառոտություն»՝ ինքը վերապատմելով երկի բովանդակությունը և ուղեկցելով իր ծանոթագրություններով: Հետագայում, բացատրելով ստեղծված իրավիճակը, նա գրել է. «Խամսայի մեկիթությունները», թեթև իմն փոփոխությամբ, եկան հանրային միտքը գրավել և հուզել: Դեռ մեզ շատ մոտ ժամանակի մը մեջ գոյություն ունեցող այդ տեսակ մը հայկական անկախության պատմությունը իբր դասախոսություն կհաղորդվեր այն. ժողովրդին, որուն դպրոցներուն ազգային հին անցյալի մը ուսուցումն իսկ գրեթե արգելված կմնար»²:

«Համառոտությունը» կից առաջաբան-հոդվածում Արփիարյանը, անդրադառնալով նախաձեռնության շարժառիթներին, ավելի պարզորոշ է ներկայացնում երկի տպագրության բուն նպատակները և դրան խոշորագույն հանգամանքները: Ամենից առաջ բացահայտվում է Րաֆֆու գործի պատմական նշա-

¹ Ուշագրավ է, որ Րաֆֆին, տեղեկանալով Արփիարյանի ձեռնարկումին, հրաժարվում է որևէ վարձատրությունից: Այդ մասին Արփիարյանը գրել է իր «Րաֆֆի և հայ վիպասանությունը» հոդվածաշարում («Մասիս», 1884, № 3739). «Երբ «Խաչագողի հիշատակարանը», որուն մեկ մասը «Մշակի» մեջ տպված, և մյուս մասը անտիպ էր տակավին, «Արևելքի» մեջ հրատարակելու արտոնությունը խնդրեցինք, առաջարկելով ընդունիլ յուր պայմաններն, պ. Րաֆֆի այնքան բարի եղավ, որ չուղեց առաջարկել ոեէ պայման, որուն համար այս առթիվ մեր շնորհակալություններն վերստին կկրկնենք»:

² Բանբեր գրականության և արվեստի. Ա. դիրք, Ս. Պետերբուրգ, 1903, էջ 194:

նակությունը և անհետաձգելի անհրաժեշտությունը՝ դարձնելու այն ժողովրդի լայն շրջանների սեփականությունը: Մեծիքությանց պատմությունը,—գրում է Արփիարյանը,—կարծես դուցազններգություն մ' է: Այդ պատմության մեջ կենդանի գույներով նկարված և ամփոփված են մեր ամեն վսեմ զգացումները, մեր ամեն ողբալի թերությունները: Այդ էջերը կկարդացվին սրտի ուրախության տրոփյուններով,—ինչպես և վշտաց արցունքներով: Ժողովրդոց համար պատմության վշտալի դասերը ապագայի ամենն են լավագույն ուղեցույցներն են³:

Պատմության այնպիսի ճակատագրական մի ժամանակաշրջանում, երբ օրակարգի հարց էր ազատագրության, ազգային ինքնորոշման խնդիրը, հայ ժողովրդի համար իսկապես ուղեցույց-դաստիարակիչ դեր կարող էին կատարել Բաֆֆու երկերը: Բաֆֆու ստեղծագործությունը ժամանակի առաջադիմական ոգու բնորոշ արտահայտությունն է: Գրողի լայն ժողովրդականության հիմքում ընկած էր գաղափարագեղարվեստական որոնումների դեմոկրատական ուղղվածությունը, հայրենիքի ճակատագրի հանդեպ տագնապի սուր զգացումը:

Արևմտյան Հայաստանը, կամ, ինչպես Բաֆֆին էր գրում, Տաճկահայաստանը, մշտապես նրա սեեռուն ուշադրության կենտրոնում է եղել: Սեփական գործի կարևորության խորին գիտակցությամբ գրողը աստիպված է ոչ թե ինքնագովության համար, այլ գեթ ինքնապաշտպանության համար ցույց տալ, թե ինչ է արել ինքը, և իր բազմածավալ գործունեությունը բնութագրելով, իբրև առաջնահերթ կարևորություն ունեցող խնդիր է նշում այն փաստը, որ «մեզանից առաջ դեռ ոչ մի վիպասան ուշադրություն չէր դարձրել տաճկահայերի կյանքի վրա: Մենք ցույց տվեցինք նրանց թշվառ դրությունը, մենք երևան հանեցինք նրանց կյանքի ամենատխուր պատկերները...»⁴: Նույն փաստն է հաստատում և Բաֆֆու առաջին կենսագիրը՝ Ա. Ավթանդիլյանը. «Պետք է ասած,—գրում էր նա,— որ գրեթե ընդմիշտ Բաֆֆի մտազաղափարն էր Թյուրքահայաստանը, նա շարունակ խոսում և հետաքրքրվում էր Թյուրքահայերի մեջ պատահած զրկանքների, առևանգությունների և անարդար անցքերի մասին»⁵: Եվ պա՛կ՝ Բաֆֆին առաջին վիպագրող հայն է, որ շրջելով Թյուրքահայերի մեջ, պատկերացնում է նրանց հասարակական ցավերի, զրկանքների և հառաչանքների արձագանքները իր վեպերում⁶:

Հայտնի փաստ էր, թե որքան կարևորություն էր տալիս Բաֆֆին իր երկրի, նրա ժողովրդի կյանքի ու կենցաղի, նրա հեռավոր ու մոտիկ անցյալի խորագնին ուսումնասիրությանն ու ճանաչմանը: Այդ նպատակով նա ոչ միայն կարդացել ու հետազոտել է եղած գրավոր աղբյուրներն ու հիշատակումները, տպագրված ու անտպա նյութերը, այլև շրջել ու հավաքել է ժողովրդի անցյալի ավանդությունները, զրույցները, գրի առել ծերունիների պատմածները: Նրա ճանապարհորդությունները հայրենի երկրում «Ժողովրդի մեջ ավելի էտորը թափանցելու» պահանջն են հետապնդել: Ահա թե ինչու նրա ծրագրերում մշտապես եղել է ուղևորությունը Կ. Պոլիս և Արևմտահայաստան, որը սակայն չի հաջողվել իրագործել «մի քանի արգելքների պատճառով, որոնց մեջ գլխավոր տեղը բռնում էր նյութական միջոցների պակասությունը»⁷: Դեռևս 1876 թ., Փիլիպոս Վարդանյանին գրված նամակում գրողը, կրկին անդրադառնալով «Տաճկահայաստանի հայոց խնդրին», անհրաժեշտ է գտնում երկրի կյանքի խոր ճանաչումը: «Խաչագողի հիշատակարանը» վեպի առիթով, նամակում բացահայտվում են վեպի ստեղծման հասարակական-քաղաքական շարժառիթները, որովհետև «...աշխատությունս, որ տաճկահայոց այժմյան պահանջնե-

3 «Արևելք», 1884, № 289 («Պ. Բաֆֆին երկի համառոտությունը»):

4 Բաֆֆի. Երկերի ժողովածու. հ. 10, Երևան, 1964, էջ 157:

5 Ա. Ավթանդիլյան. Պատկերներ Բաֆֆի կյանքից. Ալեքսանդրապոլ, 1904, էջ 15:

6 Նույն տեղում, էջ 133:

7 Բաֆֆի. Երկերի ժողովածու. հ. 10, էջ 551:

րին, որպես պիտի տեսնենք, համապատասխանում է, և կարող է լույս ձգել այն մթին խնդիրների վերա, որ շատերի երևակայության առարկա են դարձել⁸։ Նույն նամակում ուշագրավ է և գրողի վկայությունն այն մասին, որ «հաշագողի» նախնական տարբերակում վեպի «երկրորդ մասի անցքերը կատարվում են Հայաստանից դուրս Փոքր Ասիայում, Ռուսաստանում, Հնդկաստանում, իսկ կենտրոնն Կ. Պոլիս»։ Այս մասի մեջ նկարագրված է հայի գաղթական կյանքը պանդխտության մեջ⁹։

Ինչպես հայտնի է, «հաշագողի» նոր, վերամշակված տարբերակում գործողությունները ծավալվում են այլ վայրերում։ Կարծում ենք, որ գրողի համար այս հարցում սկզբունքային նշանակություն է ունեցել նաև այն հանգամանքը, որ նրան այդպես էլ չի հաջողվել տեսնել Պոլիսը։ Մեր ենթադրությունը հաստատում է նամակի վերջաբանը, ուր Բաժնին գրում է. «Խոստովանում եմ, որ մի այսպիսի մեծ աշխատությունը ավելի կատարելագործելու համար ես կարող եմ ճանապարհորդությունների, բայց դա հազիվ կարող էր հնարավոր լինել մի գրողի, որ ստիպված է օրեկան հացի համար մտածել...

Ես այժմ մեծ փափագ ունիմ նորից ճանապարհորդել ասիական Տաճկաստանում և գոնյա վեց ամիս Կ. Պոլսում մնալ, լավ հետազոտելու համար տեղային ժողովուրդների և մանավանդ հայերի կյանքը և վճռել եմ, եթե մի կողմից օգնություն չգտնեմ, դերվիշի պես կգնամ և այնպես ման կգամ»¹⁰։

Գրողի «մեծ փափագը» այդպես էլ մնում է չիրականացված, սակայն նրա ստեղծագործության հզոր արձագանքները հասնում են արևմտահայությանը, շարժում մտքերը ու հուզում հոգիները, որին և ձգտում էր հայրենասեր գրողը, Այս գործում առավել կարևորություն ու պատմական նշանակություն է ունենում Արհիարայանի «Մասիսում» տպված հոդվածաշարը Բաժնի և հայ վիպասանությունը վերնագրով¹¹, ուր առաջին անգամ արևմտահայ ընթերցողին է ներկայացվում Բաժնու ստեղծագործությունը՝ բացահայտելով նրա առաջ գալու նախապայմաններն ու պատճառները, ի հայտ բերելով այն իրավիճակը, որում գործում էր Բաժնին և ցույց տալով այն հզոր ազդեցությունը, լայն ճանաչումը, որ ունեցավ գրողը հայ հասարակական կյանքում։

Հոդվածի գրության փաստն ինքնին խոսում է այն մասին, թե ինչպիսի առաջնահերթ անհրաժեշտություն ու մեծ իմաստ է տեսել գրողը, քննադատ, հրապարակախոս Արհիարայանը Բաժնու անձի ու գործի վերաբերյալ իր խոսքն առելու, նրա հույզերի ու գաղափարների յուրատեսակ թարգման դառնալու մեջ։ Հոդվածի միջոցով ծանոթացնելով Բաժնուն արևմտահայ ընթերցողին, հաղորդակից դարձնելով նրա նպատակներին, Արհիարայանը առաջադրում է հարցեր ու խնդիրներ, որոնք հույժ հրատապ էին համազգային գրական-հասարակական ընթացքի առումով։

Բաժնու գործի մեկնաբանման ու արժեքավորման խնդիրը քննադատի կողմից դիտվում է որպես ժամանակի պահանջ ու պարտադրանք։ Իրեն հատուկ ուժի ինքնատիպ անմիջականությամբ Արհիարայանը սկսում է հոդվածը, պատմելով այն բուռն հետաքրքրության մասին, որ ծավալվել էր Բաժնու անվան շուրջը։ «Երբ Պոլիս վերադարձա Թիֆլիզեն,—գրում է նա,—ամեն բարեկամներս անվրեպ ինձ կուղղեին հետևյալ հարցումները.—Տեսա՞ր Բաժնին։—Խոսակցեցա՞ր հետը։—Ինչպե՞ս մարդ է։—Ի՞նչ կընե։ Մինչև իսկ կային այնպիսիք, որք երանի կարդացին այն աշաց, որք արժանի եղած էին հայ վիպասանը տեսնելու։ Որպիսի՞ փոփոխում ժամանակին»¹²։

⁸ Նույն տեղում, էջ 531։

⁹ Տե՛ս «հաշագողի հիշատակարանը» վեպի ծանոթագրությունը (Բաժնի. Երկերի ժողովածու 12 հատորով. հ. 5, Երևան, 1985, էջ 621)։

¹⁰ Բաժնի. Երկերի ժողովածու, հ. 10, էջ 532։

¹¹ «Մասիս», 1884, № 3734, 3736, 3737, 3739։

¹² Նույն տեղում, № 3734, էջ 129։

Ժամանակներն իրոք փոխվել էին. մեծացել էր գրականության հասարակական դերն ու նշանակությունը: Քննադատը այդ հանգամանքներով է պայմանավորում և Րաֆֆու «Հզոր ազդեցությունը», եզրակացնելով՝ «այդ օրինակ ազդեցություն ձեռք բերել կարելի է միայն ժողովրդին զգացմանց ու գաղափարաց ճշմարիտ թարգմանն հանդիսանալով»¹³։ Այս սահմանումը վերաբերում է ոչ միայն Րաֆֆու, այլ ընդհանրապես ողջ հայ գրականության ընթացքին ու զարգացմանը: Գրողը չի կարող լինել «վերացյալ էակ», «վերացյալ է նա, որ մեր սիրտը կուսումնասիրե, որո ծածուկ ցավերն ճանաչելն շատ ավելի դժվար է, քան նորա շոշափելի վերքերն: Մի՞թե հեշտին է հրճվանք ազդել մեզ, սարսուռ և հուզումներ: Խորազնին քննել ժողովրդի մը անցյալն, հեռատես լինել նորա ապագային համար, մատնանիշ ընել այն ճանապարհն ընդ որ պարտի ընթանալ...»: Քննադատը ուրախությամբ է արձանագրում հայ վիպասանության զարգացումը՝ այն դիտելով «իբր մի վիճակագրություն մեր արդի գաղափարներու, մեր արդի զգացմանց»: Քննելով այդ վիճակագրությունը, կտեսնենք, թե մեր զանազան կարգի գաղափարները համերաշխություն ունին իրենց մեջ և կկազմեն ամբողջություն մը, որ մեր ապագա զարգացման երաշխավորն է: Հայ վիպասաններն ի հանդես կածեն այդ համերաշխությունը, այդ ամբողջությունը»¹⁴։ Արփիարյանի այս տեսակետները նրա քննադատական ըմբռնումների որոշակի դրսևորումն են գրականության ժողովրդային բովանդակության, գրողի կոչման, նրա հասարակական դերի, կյանքի հետ, ժողովրդի կապի և ներգործուն ազդեցության մասին:

Իր հոգվածում Արփիարյանը քանիցս նշում է, թե «մեր կամքն անկախ պատճառներ անհնարին կընեն մեզ գրել Պ. Րաֆֆի գործոց վրա այն եղանակով, որ կհամապատասխանե մեր փափագանաց և տրամադրությանց, հետևաբար հարկադրյալ ենք գոհանալ ընդհանուր տեսություններով»¹⁵։ Իրոք, հոգվածում բացակայում է Րաֆֆու գործերի մանրամասն քննությունը, քննադատի մտորումներին հարուստ նյութ տվող յուրաքանչյուր տողի ենթատեքստի ընթերցումը, սակայն «ընդհանուր տեսությունները» ևս Արփիարյանը զարգացնում է մի նպատակադրմամբ՝ բացահայտել Րաֆֆի գրողի վիթխարի մեծությունը, ճիշտ տեղում գտնել նրա համաժողովրդական ճանաչման բացատրությունը, նրա հզոր արվեստի մեծ ազդեցության գաղտնիքը: Այդ գաղտնիքը Րաֆֆու հայրենասիրության, նրա արդիական գաղափարախոսության ոգևորիչ, վարակիչ ավյունի ու համոզիչ հավատի մեջ է դիտվում: «Ակնարկ մը տուր ի Ռուսիա հայ գիտնականին գրադարանին, մտիւր հարուստին տունը, այցելե աղքատին խրճիթը, գնա գինվորին զորանոցը կամ վաճառականին խանութը, տես երիտասարդը, ծերը, աղջիկն ու մանչը, ամեն ոք հափշտակված է Րաֆֆիով: Ինչու: Վասնզի, ինչ որ ըսած են լոկ սրտի հետ խոսող մեծ վիպասանությանց համար, նույնը կրնանք ըսել ազգային վիպասանությանց համար: Այդ մեծ վիպասանություններն գիտեն անսխալ կերպով թե մեր հոգվո որ թելերն պետք է թրթռացնեն, իսկ ազգային վիպասանությունը կարող եղած է հավասարապես ներգործել մեր վրա, իբրև մարդ և իբրև հայ: Րաֆֆի լավ քննած է մեր զգացմանց բազկերակը և գիտե, թե ունի ազգի համար հուսահատությունը մահու զանգակի ղողանջն է: Մահաբեր անհատից, մահաբեր է ազգերու համար զգրեզմանին այդ սև կաթը»¹⁶։

Զգտելով հասցնել ընթերցողին Րաֆֆու դրույթները, Արփիարյանն իր հերթին առաջադրում է խնդիրներ, որոնք ազդի առաջընթացի կարևոր նախապայման են դիտվում: Ազգի երկու հատվածների մերձեցման գաղափարը, հայ ժողովրդի միասնության ձգտումը ըստ Արփիարյանի, լավագույնս մարմնավորվել է գրականության մեջ. «Պ. Րաֆֆի այդ գաղափարներու ամենեն

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում, էջ 130:

¹⁵ Նույն տեղում, Ն՝ 3736, էջ 192:

¹⁶ Նույն տեղում, Ն՝ 3734, էջ 131:

կենդանի ներկայացուցիչը հանդիսացավ: Գրականությանը վերապահելով ազգի միասնական շահերի ու մտահոգությունների արտահայտման տարբեր կողմերը, բնագետը նկատում է, որ «ամենուն մեջ տիրապետող ոգին միևնույնն է, որով այդ վիպասաններն ճշմարտապես կներկայացնեն հայ ազգի ոգին»: Հարցը նաև դուրս է բերվում գրականության սահմաններից, դարձվում ժողովրդի պատմական ընթացքի ուղենիշ: Արփիարյանը գիտակցում էր իր առաջադրած խնդրի ծավալն ու կշիռը ոչ միայն տվյալ պատմական պահի, այլև հետագա ժամանակների համար: Հայ ժողովրդի տերիտորիալ տարանջատվածությունը չի կարող պատճառ դառնալ ազգի տրոհման: Պատմական ճակատագրի հետևանքների ստիպմամբ այն վերածվել է ժողովրդի հոգեբանական կերպարավորման և առանձնահատկության՝ պահպանելով բուն ազգայինը: «Գաղափարների համերաշխության» այդ յուրօրինակ երևույթն է, որ, ինչպես ճիշտ նկատել է Արփիարյանը, «մեր ապագա զարգացման երաշխավորն է»:

Բնագետի լայն հայացքով երևույթը դիտվում է իբրև ազգի պատմական դարգացման օրինաչափություն, որը մշտապես մնալու է պատմաբանների սեռնուն ուշադրության կենտրոնում: «Պատմական իմաստասիրությունը,— գրում է նա,— որուն առաջ այնքան ընդարձակ հորիզոններ կրնա պարզել մեր պատմությունը, բավական լրջորեն կրնա խորհիլ այն երևույթին վրա զոր մենք կընծայենք: Ազգ մը որուն մեջ այսքան զանազան կարգի բաժանումներ կտիրեն, ազգ մը, որ թեպետ այնքան ցիրուցան չէ, որքան սխալմամբ կկարծվի լինել, բայց կզտնվի ընդ հովանյավ այնպիսի տերությունց որք իրարմե բոլորովին տարբեր քաղաքակրթության կհպատակին, այդ ազգը թե յուր հողին վրա և թե յուր գաղթականությանց մեջ կսնուցանե գաղափարներու համերաշխություն»¹⁷:

Հայ ժողովրդի համար բարենպաստ դիտելով ոռոսական քաղաքակրթության ազդեցությունը, Արփիարյանը ցավով է արձանագրում, որ «Ռուսական կառավարությունը, որ Ասիո մեջ քաղաքակրթության տարածման ամենահզոր միջնորդը կհռչակե ինքզինք», մամուլի, խոսքի ազատության պայմաններ չի ընձեռում: «Իցե թե,— հուլս է հայտնում նա,— Ռուսիո կառավարությունը փոխանակ խավարամիտ Կատոլիկներու, ունկն դներ մարդկության ճշմարիտ բարեկամներու ձայնին, որք միանգամայն ազգաց բարեկամներ են»¹⁸: Ռուս ազգի առաջադիմության մեջ գրողը տեսնում է հայ ժողովրդի ապահով առաջընթացի գրավականը: Արփիարյանը ընդգծում է, որ հայ գրականության, հայ մշակույթի զարգացման գործում մեծ է եղել ոռոս առաջադիմական գաղափարախոսության դերը և այդ գաղափարախոսության մեջ ամենակարևորն է դիտվում հայրենասիրությունը: «Հայրենյաց սերը՝ իրենց առաքինությանց գլխավորը» իր մարմնավորումն է գտել գրականության մեջ, քանզի «Ազգային ոգվո զարթնում և ազգային գրականության բարգավաճում ժամանակակից են միմյանց»: Միևնույն երևույթն է դիտվում նաև Կովկասում, և Բաֆֆու հորելյանը քննադատին ներկայանում է իբրև շոշափելի ապացույց «բուն համակրանաց արտահայտության»,... Ռուսիո հայոց մատենագրական սիրահարության»¹⁹:

Մանրամասն անդրադառնալով Բաֆֆու հորելյանին, Արփիարյանը մի նպատակ է հետապնդում. կրկին ու կրկին ցույց տալ «թե ինչպես կապված են միմյանց հետ Բաֆֆի և հայ ժողովուրդն», «թե ինչպես բանաստեղծ մը կարող եղած է ներգործել յուր ազգի վրա»²⁰:

«Բաֆֆի և հայ վիպասանությունը» հոգվածում առաջադրված հարցերի բազմազանությունը չի շեղում Արփիարյանին իր բուն նպատակից՝ ըստ ամենայնի ներկայացնել արևմտահայ ընթերցողին Բաֆֆու կյանքն ու գործը: Դեռ

17 Նույն տեղում, էջ 131:

18 Նույն տեղում, խ՝ 3736, էջ 194:

19 Նույն տեղում, խ՝ 3737, էջ 211:

20 Նույն տեղում:

ավելին, արժարժվող խնդիրներն իրենց ամենատարբեր կողմերով գալիս են ամբողջացնելու մի գրողի նկարագիրը, որն իր մեջ խտացված մարմնավորել է ժամանակի ամենահրատապ իրադարձությունների արձագանքը: Սակայն գրողի գործի հասարակական բովանդակության իմաստավորումից բացի, քրն-նադատը անհրաժեշտ է դիտում և մոտիկ ծանոթությունը նրա անձի հետ՝ նրա կյանքի մանրամասներով, արտաքին նկարագրով առավել մերձենալու նրա ստեղծագործական աշխարհի էությունը: «Երբ մի հեղինակ սիրելի է մտքիդ ու սրտիդ հավասարապես, կարծես թե բան մը կպակսի ի քեզ, թե այդ հեղի-նակի կենաց մանրամասնություններուն իսկ տեղյակ չլինիս»,—գրում է Ար-փիարյանը և ապա լրացնում իր միտքը. «Հեղինակին կենաց և յուր գործոց մեջ թվի թե սերտ կապ մը կա, և առանց այդ կյանքն գիտնալու կարծես թե դժար է ըմբռնել հեղինակին ոգին»²¹:

Այս արդարացի հիմնավորմամբ, նաև իբրև ապացույց բերելով եվրո-պական քննադատության մեջ տարածում գտած նմանօրինակ հրատարակու-թյունները, Արփիարյանը իրեն հատուկ անմիջականությամբ ու հետաքրքրա-շարժ պատմեցնում նկարագրում է Րաֆֆու հետ իր հանդիպումները՝ սկսած առաջին իսկ զրույցից: Ուշագրավ է, որ առանց նույնիսկ լուսանկարը տեսնե-լու, Արփիարյանը նրան փողոցում ճանաչում է և ողջունում. «Թիֆլիզ հասնե-լուս երկրորդ օրն... մինչ կանցնեի արքունի փողոցն, տեսա թե հեռուեն կու-ղար միջահասակ, բավական լայն մի պարոն, կապույտ ականոցներով: Քովեն անցնելով ձեռք երկնցուցի.—Բարև, պարոն Րաֆֆի, ինչպե՞ս եք»: Նախագագ-ցումը չի խաբում նրան, անցորդը իրոք Րաֆֆին էր, որի զարմանքին ի պատաս-խան նա ասում է. «...խուռն բազմություն մեջ գեղեցիկ տաղանդ մը անտես չանցներ, չեմ գիտեր, ինչ շնորհ կա դեմքին վրա, որ մագնիսական զորու-թյամբ կքաշե տեսնողն»²²: Րաֆֆու արտաքինի և ներքին էության մեջ քրն-նադատը տեսնում է ներդաշնակություն, իսկ նրա լուռ բնավորությունը, մի քիչ խորհրդավոր դեմքը, շարժումները», «արդարև վսեմ ճակատը» մտածող, ստեղծագործող մարդու գաղափարն են տալիս նրան: Արտաքուստ զուսպ ու անտարբեր կեցվածքի ներքո Արփիարյանը կարողանում է տեսնել գրողի «բարեկամական գործովը» ջերմ սիրտը, որ բաբախում էր իր ժողովրդի հան-դեպ մեծ սիրով և որի ականառու ապացույցն էին գրողի ստեղծագործություն-ները:

Ավելորդ չի նկատվում և գրողի բնակարանի նկարագրությունը. «Ըսած են թե ոճը մարդն է», բայց ուրիշներն ալ կըսեն, թե «կարասիքը մարդն է»: Ըն-թերցողը Արփիարյանի հետ անցնում է մի սենյակ, «զոր պատեր պաշարեր էին գարնանային տերևներն: Ո՞ւր ենք, քարակերտ փողոցի մեջ, թե այգեստան մը: Կանանչ տերևներն մթնշաղ գույն մը կընծայեն բնակարանին. փոքրիկ սենեկին մեջ, փոքրիկ գրասեղան մը կա որու վրա անհնարին է նշմարել փոշ-ւոյ հյուլե մ'իսկ»²³: Համեստ, կոկիկ կահավորված սենյակի միակ զարդը մի քանի նկարներ էին և հարուստ գրադարանը՝ «գեղեցիկ թավջապատ ու ոսկե-զօծ» կազմերով: Այս ամենն անկեղծորեն հիացնում ու զարմացնում է Ար-փիարյանին և նա բաց չի թողնում ոչ մի մանրամասն՝ ձգտելով փոխադրել ընթերցողին այն միջավայրը, ուր «պարոն Րաֆֆի կամփոփե յուր միտքը, կշա-փավորե հոգվույն թռիչքը»:

«Րաֆֆի և հայ վիպասանությունը» հոգվածաշարը Արփիարյան գրողի և քննադատի համար հատկանշական է մի շարք առումներով, սակայն ամենից առաջ այն աչքի է ընկնում պրոբլեմայնության սուր նպատակաուղղվածու-թյամբ, արդիականության հուզող խնդիրներին արձագանքելու գրողի ձրգտ-մամբ, որին հասնելու առավելագույն հնարավորություններ էր ընձեռում Րաֆ-ֆու անձին և գործին անդրադառնալու շարժառիթը: Բազմակողմանիորեն ներ-

21 Նույն տեղում, № 3736:

22 Նույն տեղում:

23 Նույն տեղում:

կայացնելով գրողին, Արփիարյանը իբրև կարևոր խնդիր առանձնացնում է Րաֆֆին և քննադատությունը հարցադրումը, այն ուղղելով ոչ միայն Րաֆֆու, այլ ընդհանրապես ժամանակի քննադատության բովանդակությանը: Քննադատության դերը տեսնելով «գրքի մը ունեցած կոշումը և նորա ազդեցությունը ժողովրդյան մտաց և բարուց վրա» պարզելու մեջ, նա զարմանքով ու ցավով է արձանագրում այն փաստը, որ «արդարև ամենն ընդարձակ քննադատությունը զոր տեսանք պ. Րաֆֆիի գործոց մասին, ուրիշ բան մը չէր ներկայացնել մեզ՝ բայց եթե ատելության շունչ մը»²⁴, խոսքը վերաբերում է «Մեղու Հայաստանի» քննադատի՝ Հայկունու «Րաֆֆիի «Կայծեր» հոգվածին, որին ի պատասխան Րաֆֆին Փավստոս ստորագրությամբ հրատարակում է «Հայկունու կրիտիկան» և «Կայծերը»: Ուշագրավ է, որ իր թոռուցիկ դիտողություններում Արփիարյանն արտահայտել է մտքեր, որոնք ըստ ամենայնի հանգամանալի քննության են ենթարկվել Րաֆֆու փայլուն բանավեճում: Կարևորն այն է, որ ևրկուսի դիրքորոշումն էլ նույնն է՝ գրականության և քննադատության ուղենշային խնդիրների դիտարկման մեջ, այն է՝ գրականության հասարակական նշանակություն, նրա ժողովրդային բովանդակություն, քննադատության բարձր կոշում և այլն: Համահնչունությունը Րաֆֆու և Արփիարյանի հայացքներում պայմանավորված է գաղափարական տեսադրությունների հիմնական բովանդակության ընդհանրություններով: 1880-ականների ռեալիստական շարժման առաջնորդի և հայ ռումանտիզմի խոշորագույն ներկայացուցչի գաղափարական հոգեհարազատությունը հիմնվում է օբյեկտիվ պատմական գեղագիտական սկզբունքների վրա, որոնց բովանդակության կորիզը գրականության հասարակական ներգործուն գերի ըմբռնումն է: Արփիարյանը ոչ միայն պաշտպանում է և բարձր գնահատում Րաֆֆի արվեստագետին, այլև նրա գաղափարագեղագիտական սկզբունքների ստեղծագործական յուրացումը պարտադիր է համարում հայ գրականության զարգացման հաջորդ փուլերում: Ուշագրավ է, որ իր հոգվածը Արփիարյանը ավարտում է՝ տարբերակելով ներկա սերունդների ստեղծագործական ընդհանրություններն ու զանազանությունները, միաժամանակ բանաձևելով գրական նոր ուղղության ծրագրային իմաստը: Հանձինս Րաֆֆու ընդհանրացնելով գրականության պատմության որոշակի ժամանակաշրջանի արգասավոր փորձը, քննադատը գրական ընթացքի հետագա զարգացումը կապում է արդի «ընկերական բազմադիմի խնդրոց լուծումն ի հրապարակ հանելու» հետ: «Արդարև,—գրում է նա,—եթե պատմական վիպասանությունը ըստ բավականին յուր դերը կատարեց, արդի վիպասանությունը շատ առատ հունձք ունի իրեն համար... «Մասիս» և «Արևելք» իրենց աջակցությունը հոժարակամ պիտի նվիրեն այն ամեն երիտասարդներու, որք մեր ընկերական կենաց ուսումնասիրությունը իրենց աշխատանաց առարկա կընտրեն»²⁵:

Ջամանալի չէ, որ քննադատի ելույթները Րաֆֆու մասին արևմտահայ մամուլում աննկատ չեն մնում, և Րաֆֆու երգվյալ ընդդիմախոս Հայկունին չի հապաղում իր խոսքն ասել նաև այդ հոգվածների դեմ: Հակառակության մոլուցքի մեջ Հայկունին հակված է ժխտել ու բացասել այն ամենը, ինչ վերաբերում է Րաֆֆուն և կապվում է նրա անվան հետ: Արփիարյանի հոգվածների ջերմ ոգևորությունը որակվում է լոկ իբրև «պատանեկան անձնապատանություն ու պոռոտախոսություն», իսկ նրանց բովանդակության ծրագրային ուղղվածությունը դիտվում է անհարկի մի «թղթակցի» համար, որի կոշումը ասոսկ տեսնել, լսել և ուսումնասիրելն է: Հակառակորդին նսեմացնելու այս անսքող միտումնավորությունն անգամ մատնանշում է, թե որքան դիպուկ էր Րաֆֆու գործունեության նշանակետը և որքան ապարդյուն դրան հակահարվածելու փորձերը: Հայկունուն պարզապես անհասկանալի է մնում, թե ինչպես ռեալ ուղղության համակիր ու պաշտպան» Արփիարյանը «անմահության

²⁴ Նույն տեղում, № 3739, էջ 261:

²⁵ Նույն տեղում:

դափնիններ է հյուսումնա Բաֆֆուն, անտեսելով այն փաստը, որ արևմտահայ քննադատը ուղենշային է դիտում ոչ թե գրողի ռոմանտիզմը, այլ նրա ստեղծագործության առաջադիմական, հրատապ բովանդակությունն ու գեղարվեստական վարպետությունը: Արփիարյանը կարողացել էր ճիշտ արժեքավորել Բաֆֆու հայեցողության ժողովրդական բովանդակությունը, որի աննախընթաց արդիական հնչողությամբ էլ պայմանավորվում էր նրա գործի պատմական նշանակությունը: Հակառակ ռեալիզմի ուղղության Հայկունու տված միանշանակ մեկնության, Արփիարյանը ի հայտ է բերում գրական զարգացման նոր ուղղայնված ըմբռնում, որ ոչ միայն չի բացառում գրական տարբեր ուղղությունների օբյեկտիվ գնահատման հնարավորությունը, այլև բացահայտում է գեղարվեստական երկի գեղագիտական ու պատմական ճանաչողության անհրաժեշտությունը:

Հոգևածաշարը Արփիարյան քննադատի գործունեության լավագույն էջերից է, ուր որոշակիորեն դիտարկվել են հարցադրումներ, որոնք հետագայում ավելի լայն ծավալ ու խորություն են ստացել քննադատի հայացքներում: Իր տեսակետները Բաֆֆու դերի ու նշանակության մասին հայ գրականության զարգացման ընթացքում Արփիարյանը կրկին հիմնավորում է մոտ երկու տասնամյակ անց գրված «Բաֆֆի հեռապատկերը» հոդվածում: Հոգևածը գալիս է հաստատելու ոչ միայն Արփիարյան քննադատի նախկին դրույթների կենսունակությունը, այլև Բաֆֆու գործի պատմական արժեքի հեռանկալային բովանդակությունը:

Հոգևածի սկզբում մեջբերելով Իպոլիտ Տենի այն միտքը, թե «մատենագրության մը պատմությունը գրելու և անոր մեջ ժողովրդի մը հոգեբանությունը փնտրելու կ'եննարկեմ», Արփիարյանը այդպիսի գրականության լավագույն օրինակ է համարում Բաֆֆու ստեղծագործությունը: «Անոնք,—գրում է նա,—որ օր մը ուզեն ժԺ գարուն վերջին կեսին հայոց հոգեբանությունը ուսումնասիրել, անոնք պիտի դիմեն Բաֆֆի վեպերուն, իբր վավերական ու ճշմարտապատում ստուգարանի մը»²⁶: Բաֆֆու գործերի հանդես գալը դիտվում է օրինաչափ ու պայմանավորված հայ ժողովրդի բազմադարյան պատմությամբ, արդիականության մղումներով ու հրամայական պահանջով: Դեռ ավելին, չափազանց ուշագրավ է քննադատի այն միտքը, որ վերաբերում է արդեն գրողի պատմական երթի ներգործուն ընթացքին՝ «իրենց հրատարակման թվականեն հետո ունեցած ազդեցությանը»: «Բաֆֆին,—գրում է նա,—բոլորովին օրվան իրականության վիպասանը չեղավ, իր ժամանակը կանխեց: Ձգտումի գրագետ, ապագային տեսիլքը ունեցավ»²⁷: Այսպիսի եզրահանգման համար քննադատին հիմք են ծառայում հայ իրականության տեղաշարժերը 1890—97 թթ.: Արփիարյանը նկատի ունի ամենից առաջ ազգային-ազատագրական շարժման համաժողովրդական բնույթը, որի առաջին օրինակները պատկերվել էին Բաֆֆու վեպերում: Քննադատը ինքնատիպ ու գորեղ այս երևույթը բացատրում է գրողի՝ իր ժամանակի հետ ունեցած բացառիկ փոխազդեցությամբ. «Նվրոպայի մեծ վիպասաններեն ոմանց համար հարցված է թե իրենց ժամանակին բարքե՞րն են, որ անոնց վեպերուն ծնունդ տվին, թե վեպե՞րն են, որ ստեղծեցին բարքերը: Այդ միևնույն հարցումը կրնանք ընել Բաֆֆի ժամանակակից կյանքի վեպերուն համար ալ... Այսօր 1890—97 են հետո, Բաֆֆիական վեպերը իր ժամանակակից կյանքի ղլուխներ կկարդացվին»²⁸:

Բաֆֆու հանդես գալու հասարակական արժեքը քննադատը գնահատում է նրա ստեղծագործության ակներև ազդեցության տարբեր դրսևորումներում: Քաղաքացիական ակտիվ նկարագրի իդեալ հերոսների պատկերումը անդրադառնում է ու արձագանքվում հայ իրականության մեջ իբրև դաս ու պատվիրան: Արփիարյանը նման դրսևորումներից վկայակոչում է Բաֆֆու «վիպածին

26 «Գեղունի», Վենետիկ, 1902, № 4—6, էջ 26:

27 Նույն տեղում:

28 Նույն տեղում:

դուրացողանց անուններուն համատարած ընդհանրացումը», որ դիտվում է իբրև նշան, «թե ժողովուրդ մը իրեն համար կյանքի նոր տիպարներ ընտրած է»։ Գրողի ստեղծագործությունների հերոսների անունները ձեռք են բերում խորհրդանշական բովանդակություն, խտացնելով իրենց մեջ գաղափարական-նպատակային արժեք, շարունակում իրենց առաքելությունն արդեն որպես իրական մարդկանց, իրական հերոսների անուններ։ «Վերջացած գարուն երկրորդ կեսն է,—դրում է Արփիարյանը,—որ մեր հին պատմական ու ոչ քրիստոնեական անուններուն վերհիշումը զուգահեռաբանում է նոր կյանքի մը ստեղծման ձրգտումին։ Անունները զորս Բաֆֆի ծնած կամ որդեգրած էր, եկան իբր շնորհաբեր աղավաղակերպ հոգիներ հանգչիլ երիտասարդներու վրա, որոնք մեր նոր պատմությունը պիտի շինեին։ Այդ մարտական ծածկանունները հետզհետե փոխանակեցին մկրտական հորջորջումները։ Իրական կյանքի մեջ հայ ժողովուրդը լսեց անուններ, որոնց հանդիպած էր վեպերու մեջ միայն։ Ու հանդիպեցավ դեպքերու, որոնց ընտանեցած էր իբր վիպական մտացածին տիպարներու։ Երեկվան վեպը այսօրվան կյանքը։ Վա՛ղը։

Բաֆֆի համբավվոր Երազը հայ ցեղին ալ Ավետյաց երկիր մը կուտահամայնի։ Հայը ճամփա ինկավ։ Հիմակ անապատին մեջ կհանգչի աչքերը հեռապատկեր լուսերեկվին հառած միշտ»²⁹։

Բաֆֆու գաղափարների կենսագործող ուժը Արփիարյանը վավերացրել է նաև իր գեղարվեստական գործերում։

Անհայտ էին նրանց ազգային-հասարակական մշակութային գործունեության շոշափման բազմաթիվ եզրերն ու ընդհանրությունները։ Նրանց միավորում էր հայ ժողովրդի ճակատագրի, նրա ներկայի ու ապագայի մասին մտահոգությունը։ Եվ պատահական չէ, որ Արփիարյանը իր նշանավոր «Կարմիր ժամուց» վիպակի սյուժետային տարածքում կարևոր տեղ է տվել Բաֆֆու «Խենթեր» և մյուս գործերին։ Վիպակի հերոսներից մեկը՝ Տեր-Հուսիկը, Հայաստանի ազատագրության հարցը կապում էր վեց տերությունների հետ, սակայն իրադարձությունները ոչինչ հուսադրող չէին խոստանում։ «Այդ միջոցին էր, որ Բաֆֆին «Խենթեր» ձեռքը անցավ։ Մարելու մոտ կրակը նորեն բորբոքեցավ։ Ինք կարդալի հետո, գիրքը տվավ Գաբրիելին։ Տասնհինգ օր ետքը գեղացին քաղաք կվերադառնա։

— Փրկության ճամբան հիմակ գտանք, ըսելով։

Վարժապետին հետ խորհրդակցեցան։ Բաֆֆին բոլոր գրքերը պետք էր բերել տալ, ժողովրդին մեջ տարածել։

— Ժողովուրդը կուլի պատրաստենք, կըսեր տերտերացուն։ Մահմեդականներուն կռնակին հայհոյելով մենք չենք փրկվիլ։ Գայլը պառվին թող տարեր է, ան ալ մխիթարվեր է, որ գայլին ետևեն հինգ մատով։ մուր է տվեր։ Ծակատ ճակտի կուլելու պատրաստվինք։

Ու խորհուրդներ կհղանային, ծրագրերներ կպատրաստվին»³⁰։

Արփիարյանին Բաֆֆու հետ կապող ընդհանուր գործիք նպատակայնությունը ազատության գաղափարի գիտակցված ըմբռնման մեջ է։ Հայկակ-Արփիարյանը՝ իբրև այդ շարժման առաջատար մասնակից, հայտնի էր Արևելյան Հայաստանում արդեն 1870-ական թթ. վերջերին։ Երիտասարդ գործչի թղթակցությունը «Մշակին», ապա նրա այցելությունը Թիֆլիս, Երևան, էջմիածին լայն ճանաչում ու հետաքրքրություն էին առաջ բերել նրա անվան շուրջ։ Ահա թե ինչ ենք կարդում այդ մասին «Մշակի» մի քանի թղթակցություններում Երևանից, որոնք Հայկակի Կովկաս կատարած այցելության անմիջական արձագանքներն են։ «Փառք այն թղթակցին, որ առանց կրքի, առանց եսականության և առանց իր մասնավոր հաշիվներն աչքի առաջ ունենալու, անաչառապես թղթակցում է

²⁹ Նույն տեղում, էջ 27։

³⁰ «Հայ Հանդես», Վենետիկ, 1902, № 1, Բաֆֆու ստեղծագործության համանման արձագանք է նկարագրվում նաև Տ. Զյուլյուրյանի «Վանքը» վիպակում։ Տե՛ս Տ. Կ ամսաթիվ, Տ. Զյուլյուրյան. Նրկեր, Երևան, 1984։

լրադրության և առանց կողմնապահության մտրակում է հասարակության շահերը ոչնչացնող ցեցերին և գովում, խրախուսում է հասարակության հարադատ կարեկիցներին: Այսպիսով մի անկեղծ փառաց մենք արժանի ենք գտնում «Մշակի» մշտանյան թղթակից Հայկակին, որ իր գեղեցիկ և բազմակողմանի թղթակցություններով ղրավել է ամենքիս ուշագրությունը³¹: Պատահական չէր, որ արևմտահայ խոստումնալից հրապարակախոսը և հասարակական գործիչը, չնայած իր երիտասարդ տարիքին, գրավում է և Րաֆֆու ուշագրությունը: Հանձինս Արփիարյանի Րաֆֆին տեսավ այն երիտասարդներից մեկին, որ իր մեջ կրում էր նվիրական գաղափարների անգրագարձը և կարող ուժ՝ այդ գաղափարները կենսագործելու համար: Կարծում ենք, որ պատահականություն չպետք է գիտվի, որ «Կայծերի» երկրորդ գրքում գրողը հենց Արփիար անունով կոչվում էր հերոսներից մեկին, նրան օժտել է այն գծերով, որոնք ընդորոշ էին երիտասարդ Արփիարյանին: Կերպարի մանրամասները՝ տարիքը, կենսագրական որոշ գծեր և որ կարևորն է՝ հոգեբանական հականշական նկարագիրը գալիս են հաստատելու, որ կերպարի նախատիպը ամենայն հավանականությամբ Արփիարյանն է եղել: Ինչպես և իր մյուս հերոսներին, Րաֆֆին Արփիարին գարձել է որոշակի միտումների ու հայացքների կրող, որոնց իրական հիմքերը հայ հասարակական կյանքում առաջագրվող գաղափարներն էին: Բնիկ տրապիզոնցի, Վենետիկի Մխիթարյանների զպրոցում կրթված, լեզուներ իմացող Արփիարը արևմտահայ առաջադեմ երիտասարդության այն ներկայացուցիչներից է, որոնց խոհերն ու գործերը ուղղված են մի նպատակի՝ հայրենիքի ազատագրության: Վեպի հերոսի դատողություններում առանցքային են հայ ժողովրդի միասնության հեռանկարային իդեալի ծրագրերը, որոնք ուղղվում են ազգային-ազատագրական պայքարի գործնական հաստատմանը: Կերպարի և նրա նախատիպի գաղափարական հայացքների շատ կողմերով համընկնելը գալիս է հավաստելու, որ Րաֆֆին իր ռոմանտիկական իդեալի հերոսներին որոնել և գտել է իրական կյանքում՝ այդ կերպարներով ստուգելով իր մեծ գուշակումների իրավացիությունը:

РАФФИ И АРПИАР АРПИАРЯН

Л. Г. МУРАДЯН

Резюме

Общациональное значение творчества Раффи стало очевидным еще в 1870—80-е гг. Идеино-эстетическое новаторство его творчества нашло живой отклик и в западноармянской литературно-общественной среде. В этой связи трудно переоценить заслуги основоположника реалистического направления в западноармянской литературе Арпиара Арпиаряна (1851—1908)—писателя, публициста, критика и общественного деятеля. Для А. Арпиаряна, неустанныго поборника сближения двух частей Армении—западной и восточной популяризация творчества Раффи и его деятельности приобретает идеологически направленную значимость. В статьях Арпиаряна впервые всесторонне рассматривается творчество Раффи, дается его оценка в современном и историческом аспектах.

31 «Մշակ», 1884, № 54: Թղթակցությունը Երևանից է, «Սեղանակից» ստորագրությամբ, որը պատմում է այն բոլոր ոգևորության և ջերմ մթնոլորտի մասին, որ առաջացրել էր երիտասարդ Արփիարյանի այցը Երևան և Էջմիածին: Նրա պատվին Երևանցի երիտասարդները հուզիչ ընդունելություն են կազմակերպում, որի մասին է պատմում «Մշակին» ուղարկված նամակը: